


5795

1. ԲԵՐԻԱ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՏԱՆ  
ՖԵԴԵՐԱՑԻԱՆ ԴԱՐՁՆԵԼ  
ԽՈՇՀՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՅԵՐԿՐԻ  
ԱՌԱՋԱՎՈՐ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ԿՈՒԶՐԱՏ

1934

ՅԵՐԵՎԱՆ

25 AUG 2005

ՀԱԽ (47.32)

F-55

Պրոլետարներ ռուր յերկների, միացե՛ք

14 NOV 2005

L. ԲԵՐԿ

ԸՆԴՐԿՈՎԿԱՍՏ  
ՖԵԴԵՐԱՑԻԱՆ ԴԱՐՁՆԵԼ  
ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՅԵՐԿՐԻ

Ա Թ Ա Զ Ա Վ Ո Ր  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԹԱՐԳՄ. Լ. Ա.ԲՈՎ.ՅԱՆ  
ԹԱՐԳՄ. ԽՄԲ. ՄՈՐՈՅ

220

ԿՈՒՍՀԱՍ

1934



01 MAR 2013

5795

Տեղ. Խմբագիր Ա. Խաչատրյան. Կոմիտ. սրբազրի Վ. Թերզիքյան.  
Սրբազրի Ա. Տ. Մկրտչյան. Շարելու տպեց 16 հունիսի 1934 թ.  
Տպել բուլվարում 23 հունիսի 1934 թ. Հրամ. № 227-Ինդեքս ԱՀ-17  
Գլանվելու Նո 7862 Տիրած 3000 դաշտ. № 191 Թողի էտիկը 82x110  
1 առ. թեր (1 առ. թ. 25,600 առ. նշան)  
Կուտերտաք տպագան, Թերեվան, Ալևակեդյան փ. № 27

Тех. редактор С. Хачатрян. Контр. коррек. В. Терзибашян.  
Корректор А. Т.-Мкртчян. Сдано в набор 16 июня 1934 г.  
Подписано к печати 23 июня 1934 г.

Армпартиздат № 227 Индекс АС-17

Типография Партиздата ЦК КП(б)А  
Эревань, ул. Аллавердян, № 227



3220-91



Ընկ. Լ. Պ. Թերիս

Ենկ. Բերիայի նառը  
ՀամԿ(բ)կ ԽVII համագումարում  
ՀամԿ(բ)կ ԿԿ. ի աշխատանքի  
մասին բնկ. Ստալինի տված  
հաւելեցու գեկուցման առքի

Ընկերներ, ընկ. Ստալինն իր զեկուցման մեջ տվեց  
Խորհուրդների յերկրի վիթխարի աճման հանրագում  
մարները և ամենահանձարեղ պարզությամբ վորոշեց  
մեր առաջարժման ուղիները գետի անդասակարգ հա-  
սարակություն։ Խորհուրդների յերկրի աճմանը հասել  
ենք ընկ. Ստալինի զիկավորությամբ մեր կենտրոնական  
Կոմիտեյի կողմից լենինյան գիծը ճշտորեն և անշեղու-  
րման անցկացնելու հետեանքով։

Կուսակցությունը ջախջախեց ամեն յերանգի ոպոր-  
տունիստներին և իր լենինյան ԿԿ-ի ու սիրելի առաջ-  
նորդ ընկ. Ստալինի շուրջը ի մի յե համախմբված՝  
ինչպես յերբեք։

Անդրկովկասի բոլցեկները վողջ կուսակցության  
հետ միասին XVII հսմագումար են յեկել խոշորագույն  
նվաճումներով։ Անդրկովկասյան ֆեղերացիան, յերեք  
հանրապետությունների — Ադրբեջանի, Հայաստանի և  
Վրաստանի — ֆեղերացիան ամրապնդվել ետնտեսապես  
և քաղաքականապես։ Անդրկովկասն արագ տեմպերով  
գնում ե ինդուստրացման ուղղություն։ Վիթխարիորեն աճել  
ե նավթի, մարգանեցի արդյունաբերությունը։ Ստեղծ-  
ված են արդյունաբերության նոր ճյուղեր՝ քիմիական,  
տեքստիլ, սննդի։ Լայնորեն ծագալվում ե լեռնահան-



քայլն արդյունաբերությունը՝ պղինձը, քարածուխը, բարիտը, գումբրինը։ Ստեղծված են հներգետիկ հղոր բաղա, կառուցված և յուրացված են արգեն խոշոր հիգրոպայաններ՝ Ռիոնզեսը, Չորտաքեսը և այլն։

Ամրացել են գյուղի տնտեսարքադաքական դրությունը։ 1930—31 թթ. դեռևս այնպիսի զրություն եր, յերբ Անդրկովկասի գյուղում շատ կոլտնտեսություններ քայլայվում եյին։ Կուլակները և ջուջախլված հակախորհրդային կուսակցությունների—դաշնակների, մռասավաթիստների և վրացական մնացեիկների—մնացորդներն իրենց հականեղափոխական աշխատանքն աշխուժացնելու համար փորձում եյին ողտագործել զյուղացիական հարցում անդրկովկասյան կուսակցական կազմակերպությունների թույլ տված քաղաքական կոպիտ սխալները։ Միայն կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի միջամտությունից և Համե(ր)կ կե-ի 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշմբից հետո անդրկովկասյան բոլշիկները վճռականապես ձեռնամուխ յեղան այդ ամենակոպիտ քաղաքական սրաներն ուղղելուն։

Ներկայում, բնեկերնե՛ր, անդրկովկասյան գյուղում դրույնն արմատապես փոխված են։ Հսկայական աշխատանք և կատարված գյուղատնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիայի բնագավառում, աճել երերկի գյուղատնտեսության մեխանիկական բազան։ Վճռական հարցած են հասցրած կուլակային և հակախորհրդային աարբերին։ Լայնորեն զարգանում և արմատանում են հատուկ և տեխնիկական կուտուրաներ բամբակ, թեյ, խաղող, ծխախոտ, ցիտրուս և ալյն, կազմակերպորենատնտեսապես և քաղաքականապես աճում ու ամրանում են կոլտնտեսությունները։ Հարլուրավոր կոլտնտեսություններ դարձել են բոլղեկյան,

հազարավոր ու տասնյակը-հազարավոր կոլտնտեսականներ՝ ունեսոր կոլտնտեսականները և աշխատավոր-մենատնտեսներն սկսել են ավելի լավ աշխատել։ Կոլտնտեսություններում ամրապնդվել են աշխատանքային դիսցիլինան։

Ընկերներ, անդրկովկասյան գյուղի ամուր զրության ցուցանիշ և հանդիսանում այն, վոր Անդրկովկասը բուլոր տարիներում առաջին անգամը 1933 թ. կատարեց և գերակատարեց գյուղատնտեսական մթերումների հիմական ցուցանիշները։

Այս տարի հավաքած և պետության և հանձնած բամբակ 148 հազ. ս. կամ պլանի 100,3% թեյի տերեկ 3,165 հազ. կը կամ պլանի 105%։ Ծխախոտի պլանը գերակատարված եւ Պետք են նշել վոր Խորհրդային Միության մեջ Անդրկովկասն ետալիս լավագույն ծխախոտները։ Միմիայն Արխազիան տալիս են Խորհրդային Միության ծխախոտների ամբողջ արտահանման 52%։ Հավաքած են 83 միլ. հատից ավելի մանդարին, կամ 111%։ Խաղող ու գինի մթերված են 75 հազ. ս. կամ 105%, պտուղներ մթերված են 106%, կաթնամթերքներ՝ 109% և այլն։ Հացամթերումները ժամկետից առաջ են կատարված։

Անդրկովկասյան ֆեդերացիայի մեջ մտնող հանրապետությունների տնտեսական ու քաղաքական ամրապնդման, նրանց տնտեսական նախաձեռնության և լայն ինքնազործունեյության հիման վրա մենք ունենք ազգային-կուլտուրական շինարարության վերելք։

Տեղական բնիկ ազգություններից աճում են աշխատաբերերի նոր կազմեր։ Նրանց միջավայրից պատրաստվում են հազարավոր մասնագետներ և տնտեսության լավագույն դեկալարներ։ Ընթացիկ

տարում լիովին կավարտվի անգրագիտության վերացումը, մտցված և բնդհանուր պարտուսը: Աճում են աղքային գրականությունը, մամուլն ու արվեստը:

Անդրկովկասյան կազմակերպությունն այս բոլոր հաջողություններին հասել և մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի ամենորյա ղեկավարության հետեւանքով, մեր կուսակցության առաջնորդ ընկ Ստալինի անձնական ցուցումնարի և ոգնության հետեւանքով: (Ծափանարուրյուններ):

Անդրկովկասի բոլցիկների առջև կանգնած բոլոր խընդիրներից ամենից ավելի կարևոր պայքարն և նավթի համար: Անդրկովկասում նավթահանույթի տեսակարար կշիռը 1933 թ. ավելի յեր, քան Խորհրդային Միության մեջ հանվող ամբողջ նավթի 59%: Ընկերներ, այս տարի նա 70% է ավելի յե: 1933 թ. Աղբբեջանի նավթարդյունաբերությունը Խորհրդական յերկրին տվեց 15.325 հազար տոնն նավթ: Անդրկովկասը կատարել և գերակատարել և նավթային պլանը, վորապես հիմնական պլան, ինչպես և կուսակցության ու կառավարության բոլոր լրացուցիչ առաջադրանքները: 1934 թ. մենք Խորհրդային Միությանը պետք եւ տանք 22 մլն. Տ նավթ, դրանից 1 մլն. Տ գագ: 1934 թ. նավթի հանույթի մեծացումը միայն հավասար է 7 մլն. Տ, այսինքն հավասար և մոտավորապես նավթի այն քանակությանը, վոր Բագվի ամբողջ արդյունաբերությունը հանել եր 1913 թ. (1913 թ. Բագվի նավթահանքերում հանել են 7.400 հազար Տ): Մոտ 45% մենք պետք ե հանենք նոր, դեռևս քիչ յուրացրած նավթահանքերից: 1934 թ. մենք պետք ե փորենք 864 հազ. մ, վորից կեսից ավելին նույնպես նոր նավ-

թահանքերում: Ընկ. Ստալինի առաջարկությամբ Համկ(բ)կ կկ վորոշում և ընդունել ապախոշորացնելու Ազնեվթը և ստեղծելու յերեք տրեստ: Ապախոշորացումը նպաստում և արտադրության տնտեսական-աելինիկան ղեկավարության բարելավմանը: Հունվար ամսին յեղած նավթահանույթի տատանումները բացատրվում են նրանով, վոր մենք, 1933 թ. կատարելով և գերակատարելով նավթի հանույթի պլանը, հետ մնացինք փորման բնազավառում: Հենց այժմ, հունվար ամսին փորումը մեղնում կատարվում և գերակատարվում եւ Բացի այդ, մի շարք բարձր նավթատու հորեր, վորոնք գործի եյին դցված, վլթարներ ունեցան: Պետք ե նույնպես, ընկերներ, նշել—չի կարելի դրա կողքով անցնել,—վոր Աղբբեջանի նավթարդյունաբերությանը սարքավորում հայթայթող համալատասխան կազմակերպությունները կառավարության առաջադրանքներն ու վորոշումներն այնքան ել ճիշտ և իր ժամանակին չեն կատարում: Մենք անում ենք ամեն ինչ, վորպես դի հունվարյան թերահանույթը ծածկենք Շեռամսյակում: Դրա հետ մեկտեղ պետք ե ասել վոր մենք սիստեմատիկորեն պակաս ենք ստանում սարքավորումը, պակաս ենք ստանում խողովակներ, փորող դաղդյաններ, բեռնատար մեքենաներ, փայտեղեն, տրակտորներ և այլն: Սարքավորման վրակիը նավթարդյունաբերության պահանջները բավարարում ե վոչ միշտ: Հարկավոր է, վոր Ծանրաբրդժողկոմատի սիստեմում մատակարարող գործարանների գիրեկտորներն ու կուսկազմակերպությունները հատուկ կոնտրոլի տակ առնեն նավթարդյունաբերությանը սարքավորում հայթայթելը: 1934 թ. նավթի հանույթի ավելացումը պահանջում է նույնպես կտրուկ կերպով բարելավել թե ջրային և թե յերկա-

թուղային տրանսպորտի աշխատանքը, հարկավոր ե, ընկերներ, վոր ՀՃԺԿ և Զբժողկոմատը հենց այժմ միշտ ջոցներ ձեռք առնեն, վորպեսզի նավթը ժամանակին փոխադրվի ֆարբիկաների, գործարանների և հորերդային Միության շրջանների համար:

Դիտակցելով մեզ վրա, անդրկովկասյան կազմակերպության վրա ընկած ամրող պատասխանատվությունը, Անդրկովկասի բոլենիկներն ամեն ինչ անում են և կանեն, վորպեսզի 1934 թ. Խորհուրդների յերկրին տան 22 մէն. Տ նավթ:

Կազմնովիչ. — Բրագու:

Բերքա. — Գյուղատնտեսության բնագավառում մեր աշխատանքի կարևորագույն ճակատամասը պայքարն ե բամբակի համար: Կուսակցության կենտրոնական կոմիտեն 1933 թ. մեր առջև խնդիր դրեց՝ Անդրկովկասը դարձնել Խորհրդային Միության բամբակի յերկրորդ բազան: Այդ խնդիրը մենք հաջողությամբ լուծում ենք: 1933 թ. բամբակը բռնում եր 235 հազ. հեկտ., հավաքած ե 148 հազ. Տ բամբակ, նույն թվում 14.200 Տ յեղիպտական բամբակ: Եեղիպտական բամբակի պլանը մենք կտարել ենք 105% ով: Բամբակի ամրող պլանը կտարված ե 100,3 տոկոսով: Բամբակի բերքատվությունը բարձրացել ե 1930 թ. մեկ հեկտարից 3,7 ց-ից մինչև 6,7 ց 1933 թ.: 1930 թ. համեմատությամբ բերքատվությունը մենք մոտավորապես կրկնապատկել ենք: Ներկայումս, ընկերներ, պայքարում ենք, վոր մեր բամբակի բերքատվությունն ավելի բարձր լինի, վորակն ել լավացյլի: Մենք ձգտում ենք, վորպեսզի բերքատվության գործում հավասարվենք Միջին Ասիային: Մենք հատուկ ուշադրություն ենք գարձնում յեղիպտական բամբակի արմատացմանը և

10

դարգացմանը: Յեթե մենք 1930 թ. ունեյինք ընդամենը 40 հեկտ. յեղիպտական բամբակ, ապա 1933 թ. արդեն ունեյինք ավելի քան 25 հազ. հեկտ., իսկ 1934 թ. համար հաստատված ե 40 հազ. հեկտարի պլան և յեղիպտական բամբակի բերքատվությունը վորոշված ե հեկտարից 6,5 ց: Անդրկովկասը պետք ե դառնա վոչ միայն ընդհանրապես բամբակի յերկրորդ բազան, այլև յեղիպտական բամբակի կարեսրադույն բազա: Եեղիպտական բամբակի վերաբերյալ մենք գեռ կվիճենք ձեղ հետ, լնկ. Բառումանու Այստեղ, ընկերներ, չե կարելի չնշել բամբակի համար Անդրկովկասի մղած պայքարի գործում մեր Միության վորոշ անբավարությունը:

Անդրկովկասում զգալի հաջողություններ ունենք նաև թեյի մշակման դործում: Մեր կուսակցության կենտրոնական կոմիտեն 1931 թ. անդրկովկասյան կազմակերպությունների առջև խնդիր դրեց՝ յերկրորդ հակամյակում հիմնականում բավարարել ամրող Խորհրդային Միության թեյի պահանջը: Յերկու տարում՝ 1932 և 1933—մենք տնկեցինք մոտավորապես 13.900 հեկտ.: Թող ընկերները չկարծեն, թե 13.900 հեկտ, փոքր թիվ է: Թեյի մեկ հազար հեկտարն իր աշխատարությամբ հավասար ե հացահատիկային մշակույթների մոտավորապես 50—60 հազար հեկտարի: Հսկայական աշխատանք տանելով գոյություն ունեցող տնկարանները վերականգնելու և նորոգելու գործում, մենք արդին ունենք թեյի 33.325 հեկտ. տնկարան: 1933 թ. մենք հավաքեցինք 3 միլիոն կիլոգրամից ավելի թեյի կանաչ տերև և Խորհուրդների յերկրին ավելինք մոտավորապես 1,5 միլիոն կիլոգրամ չոր լավ թեյ: Մենք արդեն սովորել ենք թեյի այնպիսի տեսակներ

11

պատրաստել վորոնք վորակով հետ չեն մնում Յելունի լավագույն թեյերից: Մենք համապատասխան կազմակերպություններից կարծիքներ ունենք մեր թեյի վորակի մասին: Վրաստանի 17 շրջան պրաղվում են թեյի կուլտուրայի մշակումով, գյուղացիական 60 հազ. տնտեսություն թեյով են զբաղվում: Գլխավորապես կոլտնտեսական դաշտերում մշակող թեյը դարձել է կոլտնտեսականների մասսայի բարեկեցությունը բարձրացնելու հիմնական աղբյուր: Արդեն անցյալ 1933 թ. ՀամԿ(ր)կ կե արձանագրեց, «վոր թեյի արտադրման գործում զրված և արտասահմանից Խորհրդային Միության անկախության սկիզբը»: Թեյի մշակութի հետագա զարգացման մեջ մենք բերքատվության բարձրացումն ենք խթանում: Ընկերներ, այժմ արդեն առանձին կոլտնտեսություններում մենք ստանում ենք հեկատրից մոտավորապես 1.200—2.300 կգ բերք: Ընկերներ, այդ մեծ նվաճում ե, բայց տակավին մենք բերքատվությամբ հետ ենք մնում Յեյլոնի և ուրիշ շրջաններից, մանավանդ ձապոնիայից: Ձապոնիան ինքը 2—3 անգամ ավելի մեծ բերք և հավաքում, քան Յեյլոնը, Յավան և ուրիշները:

Ընկերներ, այստեղ պետք են նշել վոր Հողժողկումատը և թե Հողժողկոմատին կից կաղմակերպած Մերձարեադապարձայինների կոմիտեն մի յանց հետ վիճում են, թե ով պետք ե ավելի զբաղվի մերձարեադարձինների շրջաններով: Առայժմ բավարար չափով պրակտիկ աշխատանք վոչ Հողժողկոմատից, վոչ ևլ Մերձարեադապարձայինների կոմիտեյից մենք չենք դուռմ Ընկերներ, չենք զգում նաև մի ուրիշ բան: ՀամԿ(ր)կ կե վորոշել ե արդեն 1934 թ. լրիվ հարյուր տոկոսով պարարտանյութերով բավարարել թեյի շրջանները, ավելի լավ կազմակերպել խորհտնտեսային շինարա-

բությունը և կանխանշել ե մի շարք այլ խոշոր ձեռնարկումներ, վորոնք ապահովում են տարածության հետագա ընդլայնման և աշխատանքի վորակի ու բերքատվության բարեկավման հնարավորությունը: Արդ վորոշումներն, ընկերներ, տակավին իրացված չեն, Մերձարեադարձայինների կոմիտեյի և Միութենական Հողժողկոմատի միջև յեղած անհորմալ փոխարարերությունների շնորհիվ: Վրաստանի խոնավ մերձարեադարձայինների շրջանները (Աջարստան, Գուրիա, Սրբազիա, Մինքրելիա), Կոլլսիդայի տափաստանի չորացման այժմ ծավալված աշխատանքները վերջացնելուց հետո—իսկ այդ տափաստանը փոքր չե՝ մոտավորապես 214 հազ. հեկտ. եկամունք մի հսկայական միապաղպակ մասսիվ, վորտեղ կզարդանան մերձարեադարձային այգիներ: Ընկ. Ստալինը մեզ նշել ե Անդրկովկասում մերձարեադարձային կուլտուրաններն ամեն մի շոգով զարգացնելու անհրաժեշտությունը: Մենք արդին, ընկերներ, ունենք մոտ մեկ ու կես միլիոն մերձարեադարձային ծառեր՝ մանդարիններ, լիմոններ և նարինջներ: (Ծտվահարուրյուններ): Միմիայն յերկու տարում, 1932 և 1933, խորհուտեսություններում և կոլտնտեսային գաշտերում մենք տնկել ենք մոտ 400 հազար ծառ: Յիտրուսային կուլտուրաններն այժմ մշակում են Անդրկովկասում Սև ծովի ափերին: Բայց կան շրջաններ, վորտեղ ավելի վատ չեն պատվաստվի այդ ցիարուսային կուլտուրանները: Դա կասպիտականի ափի շրջանն ե, լենքորանի և Աստարայի շրջաններում, Պարսկաստանի սահմանում: Այդ ևս նշված ե ընկ. Ստալինի կողմից: Ինչպես և թեյը, ցիարուսային կուլտուրանները գառնում են մի հզոր աղբյուր կոլտընտեսային մասսանների բարեկեցության բարձրացման

գործում: Ընթացիկ տարում արդեն կոլտնտեսական-ները 200—300 ծառից, իրենց արտադրանքը պետությանը հանձնելով, ստանում եյին 20—30 հազ. և ավելի ոռութիւն: Կան այնպիսի կոլտնտեսություններ, վորոնք արտադրանքը պետությանը հանձնելուց հետո 400—500 հազարական ոռութիւն յեկամուտ են ստացել:

Բառման.—Մի տնտեսությունը:

Բերխա.—Կոլտնտեսությունը, այլ վոչ թե տնտեսությունը: 1933 թ. Վրաստանում մանդարինների թերքը հասավ ունկորդային մի թվի՝ մոտավորապես 100 միլիոն հտափ Ընկ. Ստալինը մեր առջև խնդիր դրեց՝ 1937 թ. Խորհուրդների յերկրին տալ վոչ պակաս քան կես միլիարդ հատ ցիտրուսային պտուղ: Մանդարինները, իմոնները, նարինջները, վոր անցյալում պերճանքի առարկա եյին, վոր մատչելի եյին բուրժուազիային, այժմ պետք ե դառնան Խորհրդային Միության աշխատավորների լայն սպառման առարկա: Մեր առջև պատվավոր ինդիք կա՝ ցիտրուսային պտուղներ հրամցնել Խորհրդային յերկրի բանվորների սեղաննին: Մենք, ընկերներ, բոլոր պայմաններն ունենք, վորպեսդի կատարենք ընկ: Ստալինի առաջադրանքը, և մենք հայտարարում ենք, վոր 1937 թ. կես միլիարդ ցիտրուսային պտուղ կտանք: (Ծախահարություններ, Զայներ. «Արդարական հայոց եւ»):

Այդ հաջողությունների կողքին մենք ունենք շատ թերություններ, բացեր, և շատ մեծ: Ընկ. Ստալինի գեկուցման մեջ արված ցուցումները մեր աշխատանքի թերությունների մասին՝ ամբողջությամբ վերաբերում են նաև Անդրկովկասին: Ընկ. Ստալինի գեկուցումը մեզ համար հանդիսանում է աշխատանքի մարտական ծրա-

գիր: Ընկ. Ստալինը բացառիկ պարզությամբ ու հստակությամբ, հանձարեղ խորաթափանցությամբ նշեց մեր առաջշարժման հետագա ուղին: Ընկ. Ստալինի գեկուցումը կուսակցությանը, բանվորներին և կոլտնտեսականներին վոգերում և պայքարելու սոցիալիստական շինարարության հետագա հաղթանակների համար: Անդրկովկասան կուսակցական կազմակերպությունը, Անդրկովկասի կուսակցական կադրերը կազմվել ու անել են ընկ. ՍՏԱԼԻՆԻ անմիջական ղեկավարությամբ: Անդրկովկասի հեղափոխական շարժման ամբողջ պատմությունը, անդրկովկասային կուսակցական կազմակերպության բոլոր հաջողություններն ու հաղթանակները սոցիալիստական շինարարության գործում անհազելիութեն կապված են ընկ. ՍՏԱԼԻՆԻ անվան հետ: (Յերկարաև ծախահարություններ):

Անդրկովկասի բոլշևիկները կմարտնչեն, վորպեսդի Անդրկովկասյան ֆեղերացիան դարձնեն Խորհրդների յերկրի առաջավոր հանրապետություն:

Կեցցե՛ մեր կուսակցության լենինյան շտաբ Համարկութեական կետ:

Կեցցե՛ մեծ Ստալինը: (Ծախահարություններ):



«Ազգային գրադարան



NL0183550

ЧРУР 15 ч.

ЦЕНА 15 К.

239/1934/2

495



Л. БЕРИЯ

**Превратить Закавказскую федерацию  
в передовую республику страны Советов**

(Перевод с бюллетеня 17-го съезда ВКП(б) № 6)

---

Партизат

1934

Эривань